

□□□□□□□□ □□□□□□□□□□ □□□□□□

Բյուրեղավանի համայնքապետարանը բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց հրավիրում է մասնակցելու Բյուրեղավան համայնքի բոլոր բնակավայրերում 2019 թվականի հունվարի 29-ից մինչև փետրվարի 20-ը ներառյալ կազմակերպվող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման, 2018 թվականին համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունների, ինչպես նաև սուբվենցիաներ ստանալու նպատակով ««Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության թվային հետազոտությունների սենյակի կառուցման և սանհանգույցների վերանորոգման աշխատանքներ» և «Ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգում» ծրագրերի վերաբերյալ»» հանրային քննարկումներին: Հաշվետվությունների և ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ ու դիտողություններ կարող են գրավոր ներկայացվել Բյուրեղավանի համայնքապետարան կամ ուղարկվել համայնքապետարանի էլեկտրոնային հասցեով (byureghavan@mail.ru):

Լսումները (քննարկումները) անցկացվելու են՝

- 1) 2019 թվականի փետրվարի 19-ին ժամը 13:00-ին Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքում. հասցեն՝ քաղաք Բյուրեղավան, Վազգեն Սարգսյանի փողոց 18/44, 2) 2019 թվականի փետրվարի 20-ին ժամը 12:00-ին Բյուրեղավան համայնքի Նուռնուս բնակավայրում՝ վարչական դեկավարի նստավայրում. հասցեն՝ գյուղ Նուռնուս, գլխավոր փողոց թիվ 15 վարչական շենք, 3) 2019 թվականի փետրվարի 20-ին ժամը 14:00-ին Բյուրեղավան համայնքի Ջրաբեր բնակավայրում՝ վարչական դեկավարի նստավայրում. հասցեն՝ գյուղ Ջրաբեր, 1-ին փողոց թիվ 13 վարչական շենք:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել (0222) 65203 հեռախոսահամարով:

08.02.19

0000000000 0000 000000 00000000

Հարգելի Բյուրեղավան համայնքի բնակիչներ և տնտեսվարող սուբյեկտներ, ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության և ենթակա ստորաբաժանումների 2018թվականի 12 ամիսների օպերատիվ- ծառայողական գործունեության արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ նախորդ տարվա համեմատ աճել են մարդու /անձի/ և սեփականության դեմ ուղղված հանցագործությունները:

Հորդորում ենք առավելագույնս ուշադիր լինել դեմքերի և պատուհանների փականներին, հնարավորության դեպքում տեղադրել ճաղավանդակներ և տեսանկարահանող սարքեր, ՀՀ ոստիկանության ՊՊԳՎ տարածքային ստորաբաժանումների հետ կնքել պայմանագիր օբյեկտների պահպանության համար: Կասկածելի բնույթի որևէ անձ կամ շարժ նկատելու դեպքում անհապաղ տեղեկացնել Բյուրեղավանի համայնքապետարան հեռախոս (0222 6-52-03) կամ տարածքային ոստիկանության բաժանմունք հեռախոս (1-02)

08.02.19

0000 0000000 00000000 00000000

Թափառող շների խնդիրը շարունակում է մնալ արդիական: Մասսայական վերացման մասին խոսք լինել չի կարող, ստերջացումն ու պատվաստումն էլ դեռևս հարցի վերջնական լուծում չէ:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը Բյուրեղավանի համայնքապետարանը համայնքի բնակիչներին հորդորում է լինել զգոն, իսկ երեխաներին առավելագույնս զերծ պահել թափառող շների հետ շփումներից:

08.02.19

00000000000000000000 00000000000000000000 000000000 000000000000000000

Հաշվի առնելով ընդունելության համար ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ դիմողների մեծ թիվը այս տարի

համայնքապետարանը մշակել է նոր ձևաչափ՝ ընդունելությունը կկատարվի
ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՄԲ:

Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ –ում երեխաների ընդունելությունը կազմակերպելու համար ստեղծված հանձնաժողովի նիստի արձանագրությունը
Ք. Բյուրեղավան 13.08.2018թ.

Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2018 թվականի օգոստոսի 07-ի N 73-Ա կարգադրության համաձայն Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում երեխաների ընդունելությունը կազմակերպելու համար ստեղծված հանձնաժողովը 2018 թվականի օգոստոսի 13-ին կայացած նիստում քննարկեց և հաստատեց Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ ընդունվող երեխաների ընդունելության կազմակերպումը՝

1. Ընդունելությունը կազմակերպել առցանց վիճակահանությամբ,
2. Արտոնություններ տրամադրել 4 և ավել երեխաներ ունեցող բազմազավակ ընտանիքներին, արտոնություններ տրամադրել հաշմանդամության կարգ ունեցող երեխաններին,
3. Վիճակահանությունը անցկացնել Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզում 2018թվականի օգոստոսի 23-ին ժամը 14:00-ին:

16 08 18

□□□□□□□□ □□□□ □□□□□□□□ □□□□□ □□□□□□□□□□□□□□

Հարգելի Բյուրեղավան համայնքի ակտիվ երիտասարդներ սկսվել է Կոտայքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմի համալրման գործընթացը: Խորհրդի կազմում համայնքից լինելու են երկու ներկայացուցիչ, որոնցից մեկը ներկայացնելու է պետական, իսկ մյուսը՝ ոչ պետական հատվածը: Խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող երիտասարդ անդամը՝ 16-30 տարեկան, կարող է լինել ձեզնից յուրաքանչյուրը, եթե համապատասխանում եք հետևյալ չափանիշներին՝

- 1) երիտասարդներին առնչվող կրթական, սոցիալական, զբաղվածության, առողջապահական և մշակութային խնդիրներին տիրապետելը.
- 2) երիտասարդական կազմակերպություններում տարբեր ծրագրերին կամ միջոցառումներին մասնակցության փորձ.
- 3) երիտասարդական քաղաքական բնագավառում միջազգային փորձի, պետական և հանրային կառավարման համակարգի, ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման առանձնահատկությունների իմացություն:

Խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամն առաջադրվում է համայնքի ավագանու կողմից՝ մրցույթային կարգով: Մրցույթին մասնակցելու համար կարող եք դիմել Բյուրեղավանի համայնքապետարան մինչև հուլիսի 20-ը:

12.07.18

«0000000000 0000000000» 00000000 00000000 00000000

Բյուրեղավանի համայնքապետարանն ամառային արձակուրդներին կազմակերպում է «ԲՅՈՒՐԵՂՅԱ ՄԱՆՈՒԿՆԵՐ» խորագրով բակային ճամբար: Այն իրականացվում է համայնքապետարանի մշակութային միջոցառումների շրջանակում: Մեկ ամսվա ընթացքում Բյուրեղավան, Նուռնուս, Ջրաբեր բնակավայրերում կկազմակերպենք բովանդակալից երեկոներ՝ երգ, պար, խաղեր ու լիքը անակնկալներ: «ԲՅՈՒՐԵՂՅԱ ՄԱՆՈՒԿՆԵՐ» բակային ճամբարի բացումը՝ հուլիսի 13-ին, ժամը 18:30-ին: Բոլոր փոքրիկներին հրավիրում ենք մասնակցելու համերգային ծրագրին: Բացումը կլինի բյուրեղավանցի ռեփեր Գրիգի և Բյուրեղավանում գործող «Ղեժավյու» լատինոամերիկյան պարերի խմբակի մասնակցությամբ: Ծաղրածու ԲԻՄ ԲԻՄԻ արկածներով էլ կավարտենք երեկոն: Ուրախ ու զվարճալի օրն ապահովված է, սիրով սպասում ենք Բյուրեղավանի համայնքապետարանի դիմաց....

09.07.18

000000000000000000, 00000000000 00000000 0000000000

Բյուրեղավանի համայնքապետարանի աջակցությամբ և Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի /ԳԶՀ/ նախաձեռնությամբ Ջրաբերի վարչական կենտրոնի շենքում ս/թ. հունիսի 27-ին ժամը 11:00-ին ֆերմերների, գյուղատնտեսների համար կազմակերպվում է սեմինար-դասընթաց: Դասընթացի թեմաներն են՝ անասնապահություն /հիվանդությունների վերաբերյալ սեզոնային բնորոշում/, դաշտավարություն և այգեգործություն, բույսերի պաշտպանություն: Ցանկացողներն այդ օրը կարող են ներկայանալ Ջրաբեր վարչական կենտրոնի շենք /նախկին գյուղապետարան/:

26.06.18

000000 000, 00000000 000000 0000000000000000 00000000000000 00000000 000000000 000000 ...

«ՎԵՈՒԻԱ ԶՈՒՐ» ընկերությունը տեղեկացնում է, որ ամռան ամիսներին Բյուրեղավան քաղաքում կրճատվել են ջրամատակարարման ժամերը: Ներկայացնում ենք ընկերության կողմից մեզ տրամադրած ժամանակացույցն ըստ թաղամասերի`

Բազմաբնակարանային շենքեր և առանձնատներ` 07:00-12:00, 17:00-24:00 /12 ժամ/

1-ին /նախկին Բ/ թաղամաս` 08:00-10:00, 18:00-20:00 /4 ժամ/

Հայրենադարձների թաղամաս` 08:00-10:00, 18:00-20:00 /4 ժամ/

Սարալանջ թաղամաս` շուրջօրյա /24 ժամ/

13.06.18

000000 0000000000000000 0000000000

«Գագիկ Ծառուկյան» հիմնադրամը, հավատարիմ մնալով ավանդույթին, այս տարի ևս հունիսի 1-ին` Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ Արուսյանի համայնքապետարանի հարակից տարածքում կազմակերպում է տոնական գեղեցիկ միջոցառում, համերգային ծրագիր` սիրված հեքիաթների, մուլտիերոսների, շնորհալի երգիչ երգչուհիների մասնակցությամբ:

Միջոցառման սկիզբը՝ ժամը 12.00-ին:

Բյուրեղավանի համայնքապետարանը կտրամադրի անհրաժեշտ տրանսպորտային միջոց փոքրիկներին և նրանց ծնողներին Աբովյան տեղափոխելու և ետ վերադառնալու համար: Ցանկացողները նախապես դիմեն Բյուրեղավանի համայնքապետարան, 1-ին հարկ 112 սենյակ կամ զանգահարեն հետևյալ հեռախոսահամարին՝ 095 59 85 01 :

Տրանսպորտ կտրամադրվի նաև Նուռնուս և Ջրաբեր բնակավայրերին:

Բյուրեղավանի համայնքապետարան

31.05.18

□□□□□□ □□□□□□□□□□□□□□ □□ □□□□□□ □□ □□□□□□□□□□□□ □□□□□□

ՖԻՖԱ-ի 2018թ. ֆուտբոլի աշխարհի առաջնության անվտանգության միջոցառումներով պայմանավորված Ռուսաստանի ներքոհիշյալ քաղաքներում, որտեղ տեղի են ունենալու առաջնության հանդիպումները, 2018թ. մայիսի 25-ից հուլիսի 25-ը ընկած ժամանակահատվածում մտցված է հատուկ ռեժիմ՝ Վոլգոգրադ Եկատերինբուրգ Կազան Կալինինգրադ Մոսկվա Նիժնի Նովգորոդ Դոնի Ռոստով Սամարա Սանկտ Պետերբուրգ Սարանսկ Սոչի Հատուկ ռեժիմը ենթադրում է՝ օտարերկրյա քաղաքացիները, այդ թվում նաև ՀՀ քաղաքացիները, պարտավոր են ՌԴ վերոնշյալ քաղաքներ մուտք գործելուց հետո 24 ժամվա ընթացքում հաշվառվել ՌԴ ՆԳ նախարարության համապատասխան տարածքային մարմնում, սահմանափակվելու է նշված քաղաքներ ուղևորափոխադրող ավտոբուսների մուտքը, նշված ժամանակահատվածում խստացվելու է նաև միգրացիոն հսկողությունը: Հարգելի ՀՀ քաղաքացիներ, խնդրում ենք պահպանել ՌԴ տարածքում գտնվելու կանոնները. հիշեք, որ անգամ փոքր իրավախախտումները կարող են խիստ միջոցների կիրառման պատճառ դառնալ: Առավել մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ հետևյալ կայքէջից՝ ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն պետական ծառայություն:

Իրազեկում հարկային պարտավորությունների մասին

Հարգելի Բյուրեղավան Նուռնուս և Ջրաբեր բնակավայրերի բնակիչներ,
տեղեկացնում ենք, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի համաձայն Բյուրեղավանի համայնքապետարանը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր լիազորությունների շրջանակում, համայնքի բյուջեի եկամուտների կատարման ապահովումից ելնելով և ՀՀ Կոտայքի մարզպետի հանձնարարականով՝ հողի հարկի և գույքահարկի գծով 100 000 ՀՀ դրամից ավելի հարկային պարտավորություն ունեցող անձանց նկատմամբ հարուցելու է վարչական վարույթներ: Այդ մասին Ձեզ ծանուցագրեր են ուղարկվել:
Մեկ անգամ ևս հորդորում ենք զերծ մնալ քաշքշուկներից և օրենքով սահմանված ժամկետներում կատարել Ձեր հարկային պարտավորությունները. այլապես հարցը կլուծվի դատական կարգով:

17..04.18

Համապետական շաբաթօրյակ՝ ապրիլի 14-ին

Համապետական շաբաթօրյակի շրջանակներում ապրիլի 14-ին Բյուրեղավան համայնքում կանցկացվի համապետական շաբաթօրյակ: Բյուրեղավանի համայնքապետարանը կոչ է անում Բյուրեղավան քաղաքում, Նուռնուս և Ջրաբեր բնակավայրերում գործող պետական, հասարակական, մասնավոր կառույցներին և համայնքի բնակիչներին ակտիվորեն մասնակցել համայնքի մաքրման և բարեկարգման աշխատանքներին:
«Բարեկարգում և կանաչապատում» ՀՈԱԿ-ի կողմից կտրամադրվեն համապատասխան գործիքներ, աղբահավաք մեքենաներ՝ հավաքված աղբը տեղափոխելու համար: Խնդրում ենք շաբաթօրյակի մասնակից կառույցներին և բնակիչներին լինել ակտիվ:

12.04.18

ՇԱԲԱԹՕՐՅԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Հարգելի Բյուրեղավան համայնքի բնակիչներ ս/թ-ի մարտի 17-ին Բյուրեղավանի համայնքապետարանը կազմակերպում է համայնքային շաբաթօրյակ: Շաբաթօրյակը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար Բյուրեղավանի համայնքապետարանը կոչ է անում Բյուրեղավան, Նուռնուս, Ջրաբեր բնակավայրերի բնակիչներին ակտիվ մասնակցել շրջակա միջավայրի սանիտարական մաքրման աշխատանքներին: Շաբաթօրյակին մասնակցություն են ունենալու կրթական, առողջապահական, մարզական հիմնարկները, պետական, մասնավոր և հասարակական հատվածում գործող տարբեր կառույցները, կազմակերպություններն ու անհատ բնակիչները: Անհրաժեշտության դեպքում կտամադրվեն համապատասխան պարագաներ և աղբահավաք մեքենա: Միասին մաքրենք մեր համայնքի բակն ու փողոցը:

14.03.18

ԻՐԱԶԵԿՈՒՄ

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ` ԼԻԶԻՆԳԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԼԻԶԻՆԳ

Լիզինգի առարկաների նկարագիրը և ձեռքբերման գինը Հայաստանի Ջարգացման և Ներդրումների Կորպորացիայի հետ համագործակցող, գյուղատնտեսական տեխնիկայի ներկրմամբ զբաղվող մասնագիտացված կազմակերպությունների ցանկի, տեխնիկայի բնութագրերի և ձեռքբերման գներին կարող եք ծանոթանալ / <http://specmash.am/> , /www.hrashkaygi.am/ կայքերից: Լիզինգը տրամադրվում է ՀՀ ռեզիդենտ առևտրային իրավաբանական անձանց (այդ թվում` տեղական ինքնակառավարման մարմիններին), անհատ ձեռնարկատերերին, գյուղացիական տնտեսություններին, ինչպես նաև մշտական եկամտի աղբյուր ունեցող ֆիզիկական անձանց: Ավելին իմանալու համար այցելեք` <http://smeinvest.am/am-Leasing.html>

25.02.18

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՐԱՎԵՐ

Բյուրեղավանի համայնքապետարանին անհրաժեշտ է գյուղատնտես: Մանրամասն տեղեկությունների համար այցելել համայնքապետարան կամ զանգահարել՝ 0222 6-52-03 հեռախոսահամարին:

Հասցե՝ ք.Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառ փողոց, թիվ 1 վարչական շենք:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՐԱՎԵՐ

Բյուրեղավանի համայնքապետարանին անհրաժեշտ է հողաշինարար: Մանրամասն տեղեկությունների համար այցելել համայնքապետարան կամ զանգահարել՝ 0222 6-52-03 հեռախոսահամարին:

Հասցե՝ ք.Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառ փողոց, թիվ 1 վարչական շենք

02.02.18

Իրազեկում

100 000 և ավել գույքահարկի և հողի հարկի գծով պարտավորություններ ունեցողներին խնդրում ենք ներկայանալ Բյուրեղավանի համայնքապետարան պարտավորությունների չափը ճշտելու համար: Դատական գործընթացներից, քաշքշուկներից խուսափելու համար առաջարկում ենք պատշաճ ժամկետներում կատարել համապատասխան վճարումները:

10.10.17

Աշխատանքի հրավեր

«ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲԸ -ին անհրաժեշտ է մանկաբարձ-գինեկոլոգ և նյարդաբան:
Համապատասխան մասնագետը կարող է դիմել ք. Բյուրեղավան 2-րդ փողոց, 2-րդ շենք:

Հեռ՝. 0222 6 52 49 զանգահարել ժամը՝ 09:30-16:30-ը 094 55 44 34

10.10.17

Աշխատանքի հրավեր

Բյուրեղավանի <<ԱՐԵՎ>> մանկապարտեզին անհրաժեշտ է հաշվապահ:
Մասնագիտական կրթությունը պարտադիր է, աշխատանքային փորձը ցանկալի:
Մանրամասների համար զանգահարել Բյուրեղավանի համայնքապետարան 0222 6 52-03:

10.10.17

Աշխատանքի հրավեր

Բյուրեղավանի համայնքապետարանին անհրաժեշտ են եկամուտներ հավաքագրող
մասնագետներ: Մանրամասների համար զանգահարել Բյուրեղավանի
համայնքապետարան
0222 6 52-03:

10.10.17

Հարգելի բյուրեղավանցի ուսանողներ

2017-2018 ուստարում ուսանողական անվճար ավտոբուսից օգտվել ցանկացողները կարող
են անձնագրի և ուսանողական տոմսի պատճենով ներկայանալ Բյուրեղավանի
քաղաքապետարան՝ գրանցվելու: Այնուհետև ուսանողներին կտրվի երթևեկելու կտրոններ,
որպեսզի օգտվեն անվճար ավտոբուսից: Նախապատվությունը կտրվի այն ուսանողներին,
ովքեր Բյուրեղավան համայնքի բնակիչ են:

Հիշեցում՝ նախորդ տարվա կտրոնները չեն գործածվում, երթևեկելու եք միայն նոր կտրոններով
Համապատասխան փաստաթղթերը կարող եք ներկայացնել Բյուրեղավանի քաղաքապետարան, առաջին հարկ:

25.08.17

Ուշադրություն աշխատանք փնտրողներին

Բյուրեղավանի համայնքապետարանին անհրաժեշտ է հարկերի և տեղական տուրքերի հավաքագրող: Աշխատանքը պայմանագրային կարգով:

Դիմել Բյուրեղավանի համայնքապետարան կամ զանգահարել՝ 0222 6-52-03:

24.08.17

Ընդունելություն արվեստի դպրոցում

Բյուրեղավանի արվեստի դպրոցը կատարում է 2017-2018 ուս.տարվա ընդունելություն՝ 6-12 տարեկան երեխաների համար, հետևյալ բաժիններում
Դաշնամուր
Լարային գործիքներ/ջութակ, կիթառ, կոնտրաբաս
Ժողովրդական նվագարաններ քանոն, սանթուր, թառ, քամանչա, ուդ, դուդուկ, պկու, սրինգ, դիոլ
Վոկալ
Կերպարվեստ
Խորեոգրաֆիա
Արվեստի դպրոց կարող եք ներկայացնել դիմում /գրվում է տեղում/,

2 լուսանկար՝ 3X4 չափսի,

տեղեկանք բնակվելու վայրից,

երեխայի ծննդյան վկայականի պատճեն,

ծնողների անձնագրի պատճեն:

Հայտերը ներկայացնել յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 12:00-1600, մինչև ս/թ սեպտեմբերի 1-ը՝ արվեստի դպրոց:
Հետ՝ . 093 22-91-04

17.08.17

Ընդունելություն շախմատի դպրոցում

Նոր ուսումնական տարավան ընդառաջ Բյուրեղավանի շախմատի դպրոցը կատարում է 7-8 տարեկան երեխաների ընդունելություն: Անհրաժեշտ է մինչև ս/թ սեպտեմբերի 10-ը ներկայացնել՝

դիմում, որը լրացվում է տեղում

ծննդյան վկայականի պատճեն

2 լուսանկար՝ 3x4 չափի

Դիմել՝ շախմատի դպրոց ժամը 17:00-18:00 /շաբաթ, կիրակի չդիմել/

Հեռ՝ 094 38-37-37, 055 31-70-87

15.08.17

Հայտարարություն

Հարգելի բյուրեղավանցիներ. Բյուրեղավանի համայնքապետարանն, այս կիրակի՝ օգոստոսի 13-ին ժամը 09:30-ին, սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնի օրը՝ խաղողօրհնեքին, կազմակերպում է արդեն ավանդույթ դարձած խաղողօրհնեքի արարողություն: Արարողակարգը տեղի կունենա կառուցվող սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցուն հարող տարածքում:

Բոլորիդ հրավիրում ենք մասնակցելու սուրբ արարողակարգին:

10.08.17

Գործարարներին խնդրում ենք աջակցել

Հարգելի գործարարներ այս տարի կավարտվի Բյուրեղավանի մշակույթի տան հիմնանորոգման արխատանքները, որտեղ նախատեսված է կենտրոնացնել քաղաքային գրադարանն, արվեստի և շախմատի դպրոցները: Նպատակ ունենալով բարենպաստ պայմաններ ստեղծել Բյուրեղավան քաղաքում ապրող երեխաների գեղագիտական դաստիարակության համար: Դիմում են Ձեզ խնդրանքով՝ հնարավորության սահմաններում աջակցել դահլիճի կահավորման, գույքի և տեխնիկական միջոցների ձեռք բերման հարցով: Բյուրեղավան համայնքի ղեկավար Հակոբ Բալասյան և համայնքի ավագանու անդամներ:

09.08.17

Շաբաթօրյակ

2017 թ-ի հուլիսի 29-ին <<Մաքուր Հայաստան>> ծրագրի շրջանակներում կազմակերպվում է հանրապետական շաբաթօրյակ: Շաբաթօրյակը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար Բյուրեղավանի համայնքապետարանը կոչ է անում բնակիչներին ակտիվ մասնակցել շրջակա միջավայրի սանիտարական մաքրման աշխատանքներին: Շաբաթօրյակին մասնակցություն են ունենալու կրթական, առողջապահական, մարզական հիմնարկները, պետական, մասնավոր և հասարակական հատվածում գործող տարբեր կառույցները, կազմակերպություններն ու անհատ բնակիչները: Անհրաժեշտության դեպքում կտամադրվեն համապատասխան պարագաներ և աղբահավաք մեքենա: Միասին մաքրենք մեր համայնքի բակն ու փողոցը:

28.07.17

Ուշադրություն

Բյուրեղավան համայնքի ենթակա կառույցներին անհրաժեշտ են հաշվապահներ: Մասնագիտական կրթությունն ու հաշվապահական ծրագրերին տիրապետելը պարտադիր է, իսկ աշխատանքային փորձը` ցանկալի: Մասնագետն ամբողջովին պետք է տիրապետի հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքին և իրավական ակտերին: Ցանկացողները դիմեն Բյուրեղավանի համայնքապետարան

Հեռ` 0222 6-51-41

27.07.17

Հայտարարություն

«ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲԸ -ին անհրաժեշտ է մանկաբարձ-գինեկոլոգ:

Համապատասխան մասնագետը կարող է դիմել ք. Բյուրեղավան 2-րդ փողոց, 2-րդ շենք:

Հեռ՝. 0222 6 52 49 գանգահարել ժամը՝ 09:30-16:30-ը

094 55 44 34

11.07.17

Ի ուրախություն համայնքի փոքրիկների

Բյուրեղավանի քաղաքապետարանը կազմակերպում է «Բակային ճամբար 2017» միջոցառումը: Այն իրականացվում է քաղաքապետարանի մշակութային միջոցառումների շրջանակում: Մեկ ամսվա ընթացքում, ամեն շաբաթ քաղաքի տարբեր տարածքներում տեղի կունենան «Բակային ճամբար 2017»-ի ուրախ, երաժշտական ու սպորտային միջոցառումներ: Բակերի երեխաների համար կկազմակերպվեն սպորտային խաղեր, երգի, պարի, ասմունքի, նորաձևության մրցույթներ: Փոքրիկների բակային առօրյան այդ օրը հագեցած է կլինի նաև սիրված մուլտֆիլմերի հերոսների պատրաստած զվարճալի ծրագրերով, հաճելի անակնկալներով և նվերներով: Կազմակերպչական աշխատանքներն ավելի հետաքրքիր դարձնելու համար հրավիրում ենք համայնքի ակտիվ ծնողներին ու երիտասարդներին: «Բակային ճամբար 2017»-ի լավագույն բակին սպասվում է անակնկալ: Այնպես որ, եղեք ակտիվ ու միացեք մեզ :

Հովանավոր՝ համայնքի ղեկավար Հակոբ Բալասյան

11.07.17

Ի գիտություն

Հարգելի համաքաղաքացիներ, Բյուրեղավանի քաղաքապետարանը ֆիզիկական և իրավաբանական անձանց հորդորում է ժամանակին վճարել աղբի գումարը՝ խուսափելով տույժերից և տուգանքներից:

Բյուրեղավանի քաղաքապետարան:

12.06.17

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 1-ին՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրը «Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամի հովանավորությամբ [Աբովյանի](#) քաղաքապետարանի հարակից հրապարակում, ժամը 12:00-ից մինչև 17:00-ը անց են կացվելու տոնական բազմաբնույթ միջոցառումներ:

Բյուրեղավանի քաղաքապետարանը հոգացել է փոքրիկներին Աբովյան տանելու և հետ վերադառնալու խնդիրը: Հունիսմեկյան տոնին մասնակցել ցանկացողները ժամը 12:00-ին լինեն 15շենքի դիմաց (թերթի կրպակի մոտ), որտեղից կչարժվի համայնքին պատկանող բարեգործական ավտոբուսը: Անհրաժեշտության դեպքում ավտոբուսը 12:00-ից մինչև 17:00-ն ընկած ժամանակահատվածում կսպասարկի բյուրեղավանցի փոքրիկներին և նրանց ծնողներին:

Բյուրեղավանի քաղաքապետարան

31.05.17

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԶԵՐԾ ՄՆԱՆՔ ՎԱՐԱԿՆԵՐԻՑ**

2017 թվականի մայիսին Աբովյան քաղաքում առաջին անգամ արձանագրվել է ընդերային լեյշմանիոզի 1 դեպք: Լեյշմանիոզները պատկանում են Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից սահմանված «Վերացված (մոռացված) վարակիչ հիվանդություններ»-ին, որոնք վերջին ժամանակներս նորից արձանագրվում են: Լեյշմանիոզների փոխանցումը տեղի է ունենում մլակների միջոցով: Վարակի աղբյուրը տարբեր կենդանիներն են, հիմնականում՝ հիվանդ շնագզիները: 1999-2016 թվականներին արձանագրվել է ընդերային լեյշմանիոզի 116 դեպք, որոնցից 6-ը մահվան ելքով (4-ը՝ 2016 թվականին): Դեպքերը հիմնականում արձանագրվել են Սյունիքի, Տավուշի, Լոռու մարզերում և Երևանում: 2017 թվականի հունվարից մինչ օրս Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է ընդերային լեյշմանիոզի 6 դեպք: Նկատի ունենալով վերը նշվածը, ինչպես նաև միջգերատեսչական համագործակցության անհրաժեշտությունը՝ առաջարկվում է սույն թվականի մայիսի 31-ին կազմակերպել 2 սեմինար-խորհրդակցություն՝ մարզի բուժաշխատողների շրջանում՝ լեյշմանիոզի համաճարակաբանական հսկողության, վաղ ախտորոշման, պայքարի և կանխարգելման միջոցառումների վերաբերյալ, ինչպես նաև կոմունալ ծառայությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, անասնաբուժական ծառայության ներկայացուցիչների շրջանում՝ լեյշմանիոզի բնական պահոց հանդիսացող շների և փոխանցող մլակների նկատմամբ միջոցառումների անհրաժեշտության վերաբերյալ՝ հիվանդության դեպքերի հետագա տարածումը կանխելու նպատակով: Սեմինարները կանցկացնի Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն ՊՈԱԿ-ի Փոխանցողով պայմանավորված և մակարածային հիվանդությունների համաճարակաբանության բաժնի պետ Լուսինե Պարոնյանը: Առաջարկվող սեմինարին մասնակցել ցանկացողները կարող են զանգահարել՝ 010 34 04 44h/h-ին

23.05.17

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲԸ -ին անհրաժեշտ է

.Քիթ- կոկորդ, ականջաբան

.Նյարդաբան

.Ներգատաբան

Աշխատանքը համատեղության կարգով

Մասնագետները կարող են դիմել ք. Բյուրեղավան 2-րդ փողոց, 2-րդ շենք:

Հեռ՝. 0222 6 52 49 գանգահարել ժամը՝ 09:30-16:30-ը

094 55 44 34

11.05.17

ԻՐԱԶԵԿՈՒՄ

<<ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԻՍՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ>> ՀԿ-ը <<Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը>> (ՀամաՏեղ) ծրագրի շրջանակներում իրականացնում է փոքր դրամաշնորհային մրցույթ: Մրցույթին կարող են մասնակցել՝ Հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները. Համայնքների միությունները. Քաղաքացիական նախաձեռնությունները. Ուղեկցող նյութերի փաթեթը կարող եք տեսնել հղումով <http://celog.am/hy/Announcement/AnnouncementDetail?announcementId=1111> Հասցե ք. Երևան70, Երվանդ Քոչարի 20 Հեռ 011 531397, 010 531398

07.05.17

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սիրելի բյուրեղավանդիկներ

Բյուրեղավանդի համայնքապետարանը Հաղթանակի օրվա՝ մայիսի 9-ի կապակցությամբ կազմակերպում է երթ, հետո տոնական համերգ:

Համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանի գլխավորությամբ ժամը 10:00-ին քաղաքապետարանից երթը կշարժվի դեպի քաղաքային հուշահամալիր: Հուշահամալիրում հարգանքի տուրք կմատուցվի մայիսյան հաղթանակներում զոհված հայորդիների հիշատակին:

11:30-ին Բյուրեղավանդի քաղաքային մարզադաշտում տեղի կունենա տոնական համերգ: Համերգին ելույթ կունենան բյուրեղավանդի շնորհալի երիտասարդները և հանրապետության ճանաչված երգիչներ Ռուբեն Սասունցին և Գոհար Հովհաննիսյանը:

Սիրով բոլորին հրավիրում ենք մասնակցելու քաղաքային տոնակատարությանը:

Բյուրեղավանդի համայնքապետարան

04.05.17

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի բյուրեղավանցիներ

Բյուրեղավանի համայնքապետ Հակոբ Բալասյանի նախաձեռնությամբ մայիսի 6-ին՝ շաբաթ օրը, կանցկացվի ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՇԱԲԱԹՕՐՅԱԿ: Բյուրեղավանի համայնքապետարանը կոչ է անում բոլոր տնտեսավարող սուբյեկտներին, ՀՈԱԿ-ների կոլեկտիվներին ինչպես նաև մեր բոլոր համաքաղաքացիներին ակտիվորեն մասնակցել ՇԱԲԱԹՕՐՅԱԿԻՆ: Անհրաժեշտության դեպքում կտամադրվեն համապատասխան պարագաներ և աղբահավաք մեքենա: Միասին մաքրենք մեր համայնքի բակն ու փողոցը:

04.05.17

ԱՐԻ ՏՈՒՆ

ՀՀ սփյուռքի նախարարությունը ս/թ հունիսի 18-ից մեկնարկում է «Արի տուն» 2017 ծրագիրը: «Արի տուն» ծրագրի նպատակն է աշխարհասփյուռ հայ երիտասարդներին ճանաչելի դարձնել Հայաստան Հայրենիքը, նրանց մեջ սերմանել ազգային արժեքներ, զարգացնել ազգային ինքնագիտակցությունը, ծանոթացնել իր ժողովրդի ավանդույթներին ու սովորույթներին, հայ ընտանիքին, հայ մարդու հոգեկերտվածքին, աջակցել Հայաստան-Սփյուռք բարոյահոգեբանական, կրթամշակութային կապերի ամրապնդմանը: «Արի տուն» խորագրով ծրագրի կազմակերպիչները հավատացած են, որ սփյուռքահայ երիտասարդի հյուրընկալելով՝ Դուք կնպաստեք Հայրենիքի հետ Սփյուռքի մեր հայրենակիցների մերձեցմանը, նրանց հայրենի հողին և հոգևոր-մշակութային արժեքներին կապելու ազգանվեր գործին: «ԱՐԻ ՏՈՒՆ» ծրագրի հյուրընկալ ընտանիքների ընտրության չափորոշիչներ Հյուրընկալող ընտանիքը պետք է՝

- լինի բարեկեցիկ, ունենա կենցաղային անհրաժեշտ պայմաններ, ունենա հյուրընկալվող սփյուռքահայ երիտասարդին հասակակից և նույն սեռի ընտանիքի անդամ,
- հյուրընկալության 9 օրերի ընթացքում ապահովի ջերմ, ապահով, առողջ մթնոլորտ սփյուռքահայ երիտասարդի համար,
- ստեղծի կոմունալ ծառայություններից (տաք ջուր, լոգարան, սանհանգույց) օգտվելու հնարավորություն,
- հատկացնի առանձին ննջասենյակ կամ, դրա անհնարինության դեպքում՝ առանձին մահճակալ,
- կարողանա ապահովել սնունդը (առնվազն՝ նախաճաշ և ընթրիք),

- գերծ մնա հնարավոր վիճաբանություններից և տհաճ միջադեպերից, խնդիրների առաջացման դեպքում տեղեկացնի ՀՀ սփյուռքի նախարարություն (կամ տվյալ համայնքի վարչական շրջանի ղեկավարությանը)՝ փորձելով համակարգող անձի հետ ընդունելի լուծում գտնել,
- ապահովի երիտասարդի անհրաժեշտ ներգրավվածությունը նախատեսված մշակութային, ինչպես նաև ընտանիքի կողմից կազմակերպվելիք լրացուցիչ ժամանցային միջոցառումներին,
- անհրաժեշտության դեպքում ապահովի առաջին բժշկական օգնություն:

Այն ընտանիքները, որոնք ցանկություն կունենան հյուրընկալել սփյուռքահայ երեխայի, առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու և հայտ ներկայացնելու համար դիմեն Բյուրեղավանի քաղաքապետարան կամ զանգահարեն հետևյալ հեռախոսահամարներով՝ 094 15 16 09 կամ 095 59 85 01:

20.04.17

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հրավիրում ենք գործարարներին

Բյուրեղավանի համայնքապետարանը հրավիրում է և պատրաստակամ է գործարար աշխարհի ներկայացուցիչներին աջակցել՝ համայնքում իրականացնելու ներդրումային ծրագրեր: Նոր արտադրություն հիմնողների և գործող բիզնեսն ընդլայնելու համար կստեղծվի առավելագույն բարենպաստ միջավայր աշխատանքները կազմակերպելու գործում:

Ներկայացրեք ձեր ներդրումային ծրագրերը, որոնք քննարկման փուլ կանցնեն նաև Կոտայքի մարզում և ՀՀ կառավարությունում, որտեղից նույնպես կստանաք անհրաժեշտ աջակցություն:

Հայտերն ուղարկեք byureghavan@mail.ru էլեկտրոնային փոստին կամ այցելեք Բյուրեղավանի համայնքապետարան:

Սիրով սպասում ենք Ձեզ մեր համայնքում:

20.04.17

ԻՐԱԶԵԿՈՒՄ

Հարգելի բյուրեղավանցիներ Ամերիկյան խորհուրդներ կազմակերպությունն 2017թ-ին շարունակելու է իրականացնել օրենսդիր մարմինների աշխատակիցների մասնագիտական կատարելագործմանը և փոխանակմանն ուղղված ծրագիրը (Professional Fellows Program /PFP/): Այս ծրագիրը հնարավորություն է ընձեռում օրենսդրական մարմինների աշխատակիցներին մեկնել ԱՄՆ` ուսումնասիրելու ամերիկյան օրենսդրական հաստատությունների և կառույցների փորձը: Ամերիկյան խորհուրդները մարտի 23-ին ժամը 18:30-ին տեղեկատվական հանդիպում է կազմակերպում ծրագրին դիմելու գործընթացի և իրականացման փուլերի վերաբերյալ:
Հեռ` 010 56-00-45, 010 54-40-12
Էլ. փոստ` pfp@americancouncils.am :

Ավելի մանրամասն այստեղ <http://professionalfellows.americancouncils.org/#top>

21.03.17

Հարգելի համաքաղաքացիներ

Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքի «Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ում 03.03.2017թ.-ին ժամը 10-ից անց է կացվելու «ԲԱՑ ԴՈՆԵՐԻ ՕՐ» առողջապահական միջոցառումը, որի շրջանակներում Երևան քաղաքից ժամանած առաջատար բժիշկ-մասնագետներ` նյարդաբան, սրտաբան, ներզատաբան, ակնաբույժ, ուռուցքաբան, մանկաբարձ-գինեկոլոգ, մաշկաբան, անոթաբան, արյունաբան, ուռուլոգ, վնասվածքաբան, մանկաբույժ կտրամադրեն մասնագիտական խորհրդատվություն:
Հերթագրվելու համար կարող եք դիմել`

1. Տեղամասային բժշկին
2. Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա մատնենավարման բաժին
3. Ջանգահարել 6-52-49 հեռախոսահամարով

Պոլիկլինիկայի տնօրինություն

24.02.17

ԻՐԱԶԵԿՈՒՄ

Հարգելի բնակիչներ 2017 թվականի մարտի 7-ին ժամը 16-ին «Բյուրեղավանի արվեստի դպրոց» ԱՌԻՀ ՀՈԱԿ - ի շենքում, հասցեն՝ քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց18/43. անց է կացվելու հանրային լսումներ (քննարկումներ) «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» թեմայով:

24.02.17

Ուշադրություն նորապսակներին

Տյառնընդառաջի կապակցությամբ Բյուրեղավանի քաղաքապետարանն այս տարի ևս կազմակերպում է միջոցառում, նորապսակների օրհնության կարգ: Խնդրում ենք 2016թ-ի փետրվարի 15-ից մինչև 2017-ի հունվարը ներառյալ ժամանակահատվածում ամուսնացած զույգերին ներկայանալ քաղաքապետարան միջոցառման համար անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելու նպատակով: Խնդրում ենք ներկայանալ քաղաքապետարան՝ մինչև ս/թ փետրվարի 10-ը: Տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ 094 151-609 հ/հ-ին կամ գրել քաղաքապետարանի ֆեյսբուքյան էջին:

30.01.17

Ուշադրություն

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոներին ընդառաջ Բյուրեղավանի քաղաքապետ Հակոբ Բալասյանը բյուրեղավանցի փոքրիկներին կնվիրի հրաշալի տոնական ցերեկույթ:

Դեկտեմբերի 28-ին ժամը 12-ին Բյուրեղավանի քաղաքապետարանի հարակից բակում տեղի կունենա մանկական ուրախ տոնահանդես: Մեզ հյուրընկալվելու են հեքիաթների ու մուլտերի ամենասիրելի հերոսները, երգիչներ և իհարկե Ձմեռ պապն ու Ջյունանուշը:

Սիրով սպասում ենք բոլորիդ

Բյուրեղավանի քաղաքապետարան

27.12.16

ԻՐԱԶԵԿՈՒՄ

Բյուրեղավանի քաղաքապետարանը և Բյուրեղավանի մանկապատանեկան մարզադպրոցը 2016 թվականի դեկտեմբերի 2-ին Ս. Վարդանյանի անվան ավագ դպրոցի մարզադահլիճում անց են կացնելու Վահրամ Նիգոյանին նվիրված ամենամյա մարզական հուշամրցաշար: Այս տարի, բացի վոլեյբոլ մարզաձևից նախատեսվում է անցկացնել նաև շախմատի մրցաշար: Վոլեյբոլի մրցումներին մասնակցել ցանկացող թիմերը մասնակցության հայտը կարող են ներկայացնել Բյուրեղավանի մանկապատանեկան մարզադպրոց, տնօրեն՝ Նորիկ Տերտերյան (հեռ.՝ 094 32 46 96):

Շախմատի մրցաշարին մասնակցել ցանկացողները դիմեն Բյուրեղավանի շախմատի

դպրոցի մարզիչ Անդրանիկ Խաչատրյանին (հեռ.՝ 094 38 37 37, 095 38 37 37):
Տարիքային սահմանափակում չկա:

Հայտերն ընդունվում են մինչև ս/թ նոյեմբերի 25-ը:

Բյուրեղավանի քաղաքապետարան

18.11.16

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է ՏՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ
ՆԿԻՐՎԱԾ ՀՀ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ 25 ԱՄՅԱԿԻՆ: ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-ին ժԱՄԸ 16:00-ին
ԲՈՒՆՈՒՂ ՀՐԱՎԻՐՈՒՄ ԵՆՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԱՐԶԱԴԱՇՏ
ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ: ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ՀԱԳԵՑԱԾ Է ՀԱՄԵՐԳԱՅԻՆ
ԾՐԱԳՐՈՎ: ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ և ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՎ ՀԱՆԴԵՍ ԿԳԱՆ ԳՈՀԱՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆՆ ՈՒ ԳՐԻԳՈՐ ՀԱՄԲԱՐՅԱՆԸ: ՀԱՄԵՐԳԻՆ ԿՄԱՍՆԱԿՑԵՆ ՊԱՐԱՅԻՆ
ՀԱՄՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՄԵՐ ՔԱՂԱՔԻ ՇՆՈՐՀԱԼԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ:

Սիրով սպասում ենք բոլորիդ

24.09.16

Հարգելի համաքաղաքցիներ

Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) աջակցությամբ և ՀՀ
առողջապահության նախարարության անմիջական օժանդակությամբ սեպտեմբեր-նոյեմբեր
ամիսներին Հայաստանում առաջին անգամ իրականացվելու է «Ոչ վարակիչ
հիվանդությունների ռիսկի գործոնների համաճարակաբանական հսկողության STEPS»
համազգային հետազոտական ծրագիրը, որի նպատակն է ընտրանքային հետազոտության
միջոցով հավաքագրել տվյալներ Հայաստանի Հանրապետության 18-69 տարեկան

բնակչության շրջանում ոչ վարակիչ հիվանդությունների (ՌՎՀ) զարգացման ռիսկի գործոնների տարածվածության մակարդակի գնահատումը, ՌՎՀ-ի ռիսկի գործոնների աճի և ուղղվածության միտումների վերահսկումը, ՌՎՀ-ի կանխարգելմանն ու վերահսկմանն ուղղված քաղաքականություն մշակումը: Հետազոտության շրջանակներում կիրականացվեն ինչպես մարդաբանական և գործիքային (հասակ, քաշ, գոտկատեղի և կոնքի շրջագիծ, զարկերակային ճնշում), այնպես էլ լաբորատոր չափումներ բիոքիմիական գործոնների (գլյուկոզայի և ընդհանուր խոլեստերինի, բարձր խտության լիպոպրոտեիդնորի պարունակությունը մազանոթային արյան մեջ) որոշմամբ՝ կիրառելով «չոր» քիմիական հետազոտության մեթոդը, Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից տրամադրված բարձրորակ սարքավորման միջոցով, համապատասխան ուսուցում անցած փորձառու անձնակազմի կողմից՝ անվտանգության անհրաժեշտ նորմերի պահպանմամբ: Ազգային մակարդակում ՌՎՀ-ի ռիսկի գործոնների վերաբերյալ ստույգ և հավաստի տվյալների առկայությունը թույլ կտա ՀՀ կառավարությանն իրականացնել ՌՎՀ-ի կանխարգելմանն ու վերահսկմանն ուղղված միջոցառումների հիմնավորված պլանավորում: Սիրելի քաղաքացիներ՝ հայցում ենք Ձեր աջակցությունը և մասնակցությունը հարցումներին, մարդաբանական ու բիոքիմիական չափումներին: Բյուրեղավան քաղաքը նույնպես ընդգրկված է այն համայնքների ցանկում, որտեղ կիրականացվեն «Ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների համաձարակաբանական հսկողության STEPS» համազգային հետազոտական ծրագիրը:

«ԲՅՈՒԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲԸ

23.09.16

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի բյուրեղավանցիներ

ՀՀ Անկախության 25 ամյակի կապապցությամբ Բյուրեղավանի քաղաքապետարանը սեպտեմբերի 21-ին ժամը 10:30-ին կազմակերպում է այց քաղաքային հուշահամալիր, որտեղ ծաղկեպսակ կդրվի և հարգանքի տուրք կմատուցվի անկախության համար զոհված մեր հերոսների հիշատակին: Դուք ևս կարող եք Ձեր մասնակցությունն ունենալ: Կրկին

քաղաքապետարանի նախաձեռնությամբ, սեպտեմբերի 21-ին ժամը 20:00-ին
Բյուրեղավանում տեղի կունենա տոնական հրավառություն:

20.09.16

Ուշադրություն

Հարգելի բյուրեղավանցի ուսանողներ

2016-2017 ուստարում ուսանողական անվճար ավտոբուսից օգտվել ցանկացողները կարող են անձնագրի և ուսանողական տոմսի պատճենով ներկայանալ Բյուրեղավանի քաղաքապետարան՝ գրանցվելու համար: Այնուհետև ուսանողներին կտրվեն անվճար ավտոբուսով երթևեկելու կտրոններ: Կգրանցվեն այն ուսանողները, ովքեր Բյուրեղավան համայնքի բնակիչ են:

24.08.16

Հայտարարություն

Հարգելի բյուրեղավանցիներ ս/թ օգոստոսի 14-ին ժամը 11-ին, Աստվածածնի Վերափոխման տոնի օրը՝ խաղողօրհներփին, Բյուրեղավանի համայնքապետարանը քաղաքում կառուցվող սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցուն հարող տարածքում կազմակերպում է քաղաքում ավանդույթ դարձած խաղողօրհներփ արարողություն: Արարողությունից հետո օրհնված խաղողը շենքերի բակերում կբաժանվի բնակչությանը:

09.08.16

Տեղեկատվություն

2017թ-ի հուլիսին Ճապոնիայի Կանադավա նահանգում կկայանա «Աշխարհի երեխաներ 19-րդ միջազգային ցուցահանդեսը», որն իրականացնում է «Ճապոնիայի արտասահմանյան համագործակցության ընկերությունը» (JOCA): Մրցույթին կարող են մասնակցել 4-ից 15 տարեկան երեխաները: Հայտերի և աշխատանքների ներկայացման վերջնաժամկետը 2016թ-ի նոյեմբերի 30-ն է: Մրցույթի մասին մանրամասն տեղեկություն կարելի է ստանալ [w
www.earthplaza.jp/biennial/English/index.html](http://www.earthplaza.jp/biennial/English/index.html)

կայքից,

k-biennial@earthplaza.jp

էլեկտրոնային փոստի միջոցով կամ զանգահարել (+81)-458962121 հ/հ-ին:

27.07.16

ԻՐԱԶԵԿՈՒՄ

Հայաստանի համայնքների միություն

Ներկայացնում ենք համայնքներում զբոսաշրջության զարգացման նոր հնարավորության մասին:

Եթե ձեր համայնքում կա ընտանիք (անձ), ով շահագրգռված է եկամուտ ունենալ իր տունը որպես հյուրատուն կամ օբևանատուն գործարկելով, ապա անրաժեշտ է մինչև հուլիսի 22-ը europaucastour@gmail.com

հասցեին ուղարկել ձեր համայնքից 1-3 տան տարբերակ, կցելով`

- 1. լուսանկարներ` տան արտաքին տեսքը, սենյակների լուսնանկարներ, լոգասենյակի լուսանկարներ, բակի լուսանկարներ:
- 2. Նշել մարզը, համայնքը, տան հասցեն, ինդեքսը
- 3. կոնտակտային անձի անուն ազգանունը, հեռախոսահամարը
- 4. քանի սենյակ և քանի մահճակալ կարող են տրամադրել (1-ից սկսած)

Ընկերության ներկայացուցիչները հետադարձ կապ կհաստատեն կոնտակտային անձի հետ, կայցելեն համայնք, կտրամադրեն անվճար խորհրդատվություն և կներկայացնեն համագործակցության պայմանները:

15.07.16

ԻՐԱԶԵԿՈՒՄ

Հարգելի բյուրեղավանցիներ «Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տնօրինությունը հայտնում է, որ հուլիսի 12, 13, 14-ին Շտապ օգնության մեքենան՝ վերանորոգման նպատակով չի գործելու: Բոլոր կանչերը կգրանցվեն և սպասարկումը կլինի անձնական մեքենաներով: Հիվանդին տեղափոխելու խնդրի դեպքում կօգտվենք Աբովյանի շտապ օգնության ծառայությունից:

11.07.16

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Բոլոր այն ֆիզիկական և իրավաբանական անձիք, ովքեր ունեն հողի և գույքահարկի պարտքեր՝ խնդրում ենք վճարել կուտակված պարտքերը: Ձեր պարտքի չափի մասին կարող եք տեղեկանալ, զանգահարելով՝ 0222 65-5-61 հ/հ-ին:

Հայտարարություն

Պահանջվում է գնումների համակարգող՝ համայնքային ենթակայության կազմակերպություններում պայմանագրային կարգով աշխատելու համար: Համակարգողը պետք է ընդգրկված լինի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող գնումների որակավորված մասնագետների ցանկում:

Դիմել Բյուրեղավանի քաղաքապետարան, կամ զանգահարել՝ 0222 6-52-03 հ/հ-ին:

07.07.16

ԻՐԱԶԵԿՈՒՄ

Աբովյանի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունը Բյուրեղավան քաղաքում շարունակում է իրականացնել սոցիալապես անապահով ընտանիքներին, որպես սոցիալական աջակցություն հատկացված DVB-T2 ստանդարտի թվային հեռուստատեսային ընդունիչ սարքերի անվճար բաշխում: Ընդունիչ սարքեր կտրվեն այն ընտանիքներին, ովքեր գրանցված են Վարդան Ենոքյանի տարածքում: Հուլիսի 7-ին ժամը 15:00-ին կարող եք ներկայանալ Բյուրեղավանի քաղաքապետարան ներկայացնելով անձնագիր և սոցիալական անձնագիր /Փարոսի գրքույկ/: Ցուցակները փակցված են քաղաքապետարանի հայտարարությունների պատին:

30.06.16

Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարություն

Հայտնում ենք, որ Հնդկաստանի միջազգային տեխնիկական և տնտեսական համագործակցության (ITEC) ծրագրի շրջանակներում 2016-2017թթ. ընթացքում կազմակերպվում են դասընթացներ, որոնց մասնակցելու են հրավիրվում 25 մասնագետ Հայաստանից: Հնդկական կողմը կատարում է թեկնածուների վերջնական ընտրությունը, ինչպես նաև հոգում է բոլոր ծախսերը: Դասընթացների մասին մանրամասն տեղեկությունները, ինչպես նաև լրացման հարցաթերթիկը կարելի է գտնել www.indianembassy.am ինտերնետային կայքում: Բոլոր մասնակիցները պետք է գրանցվեն առցանց <http://www.itecgoi.in/index.php> կայքում:

Դասընթացներին մասնակցելու համար անհրաժեշտ է ապահովել թեկնածուական ներկայացման և հարցաթերթիկի լրացման հետևյալ պայմանները.

- անհրաժեշտ է՝ առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, դասընթացի մասնակիցը պետք է լինի 25-45 տարեկան, ներկայացնել առողջության մասին բժշկական տեղեկանք, անգլերեն լեզվի իմացություն: Լեզվի իմացությունը հաստատվում է ուսումնական հաստատության փաստաթղթով (դիպլոմ, հավաստագիր) կամ լեզվի ուսուցման որևէ կենտրոնի կողմից տրված տեղեկանքով:
- հարցաթերթիկը լրացվում է համակարգչային շարվածքով և ԱԳՆ ներկայացվում 4

օրինակից (բնօրինակ և պատճեններ), միաժամանակ բնօրինակի էլեկտրոնային տարբերակը CD կրիչով (WORD ֆորմատով)

- 3X4սմ չափի 4 լուսանկար, որից մեկը CD կրիչով (JPEG ֆորմատով)

- Եթե նախկինում հայտերը ներկայացվում էին թղթային տարբերակով, ապա սկսած 2013թ.-ից հնդկական կողմը անցել է հայտերի ընդունման էլեկտրոնային, կենտրոնացված համակարգի /տեղերը արագ լրանում են/, ուստի դիմումները պետք է ներկայացվեն ՀՀ ԱԳՆ դասընթացի սկսվելու օրից առնվազն 3 ամիս առաջ կամ ավելի շուտ:

20.06.16

Հարգելի բյուրեղավանդիներ

Ս/թ մայիսի 9-ին Բյուրեղավանդի քաղաքապետարանը կազմակերպում է տոնական երթ դեպի քաղաքի հուշահամալիր՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմի և Շուշիի ազատագրման տարեդարձներին: Երթին կմասնակցեն համայնքի տարբեր ոլորտների ներկայացուցիչներ, վետերաններ, ազատամարտիկներ, համայնքի ավագանու անդամներ, դպրոցականներ: Հուշահամալիրի տարածքում տեղի կունենա մայիսի 9-ին նվիրված համաերգ:

Երթի սկիզբը ժամը 10-ին:

Բյուրեղավանդի քաղաքապետարան

05.05.16

Իրազեկում

Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակի օրը՝ ապրիլի 24-ին ժամը 11:00-ին Բյուրեղավանի քաղաքապետարանի աշխատակազմը, ավագանին, քաղաքապետ Հակոբ Բալասյանի գլխավորությամբ այցելություն են կազմակերպում քաղաքային հուշահամալիր, որտեղ հարգանքի տուրք կմատուցվի անմեղ զոհերի հիշատակին: Ցանկացողները կարող են միանալ մեզ:

22.04.16

Հարգելի բյուրեղավանցիներ

Վերջին օրերի իրադարձություններն ապացուցում են, որ մեր ազգը միասնական է ու հզոր: Աշխարհասփյուռ հայությունը հանդես է գալիս տարբեր նախաձեռնություններով: Մենք ևս անմասն չենք: Բյուրեղավանի քաղաքապետարանը կոչ է անում միանալ այս հայրենանվեր գործին և իր ներդրումն ունենալ հայրենիքի պաշտպանության սուրբ գործին:

Արցախում և սահմանամերձ գոտիներում տեղի ունեցած տարաբնույթ վնասները վերականգնելու համար բացվել են հաշվեհամարներ՝

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿԻ ՀՐԱՋՂԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

h/h 163158015376

hվհh 03020733

Մասնակից դառնանք հայրենիքի պաշտպանությանը, սիրենք հայրենիքը:

06.04.16

Հարգելի բյուրեղավանցիներ

Բյուրեղավան համայնքում 2016 թվականի ապրիլի 9-ին և ապրիլի 30-ին կազմակերպվելու են համաքաղաքային շաբաթօրյակներ:

Խնդրում ենք բոլորին ցուցաբերել ակտիվ մասնակցություն:

Բյուրեղավանի քաղաքապետարան

24.03.16

«FASA»

Հայաստանում գյուղատնտեսության ֆինանսավորում

«Հայաստանում գյուղատնտեսության ոլորտի ֆինանսավորում» ծրագրի երկրորդ փուլը մեկնարկել է 2015-ին: Ծրագրի շրջանակներում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության (BMZ) միջոցներից 15 մլն եվրո ուղղվելու է Հայաստանում գյուղատնտեսության զարգացմանը՝ ընտրված բանկերի և վարկային կազմակերպությունների միջնորդությամբ վարկերի տրամադրման միջոցով: Ծրագիրն իրագործում է Գերմանա-հայկական հիմնադրամը գերմանական KfW զարգացման բանկի հետ համատեղ: Վարկառուներ կարող են հանդիսանալ այն ձեռնարկությունները, ձեռնարկատերերը և անհատ գյուղատնտեսները, որոնք, առաջնային գյուղատնտեսության (հողագործություն, անասնապահություն) հետ մեկտեղ ներգրավված են

գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման, գյուղատնտեսության համար նյութերի, պարարտանյութերի և քիմիկատների արտադրության, ինչպես նաև գյուղատնտեսության հետ կապված տարբեր ծառայությունների մատուցման և այլ ոլորտներում: Վարկերը տրամադրվում են հետևյալ ֆինանսական կառույցների՝ «ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ», «Հայբիզնեսբանկ», «Ինեկոբանկ» բանկերի և «ԱԳԲԱ Լիզինգ», «Կամուրջ», «Քարդ Ագրոկրեդիտ», «Ֆարմ Կրեդիտ», «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» և «Ֆինքս» վարկային կազմակերպությունների միջոցով: Ծրագրի իրագործմանը տեխնիկական աջակցությունն է ցուցաբերում շվեյցարական «Business and Finance Consulting» ընկերությունն իր տեղական գործընկերների՝ «Ալֆափլաս Քոնսալթինգ» և «ICARE Foundation» ընկերությունների հետ համատեղ: Տեղեկատվական թերթը՝ որտեղ ավելի մանրամասն տեղեկություններ են զետեղված, փակցված է Բյուրեղավանի քաղաքապետարանի հայտարարությունների ցուցատախտակին: Ծանոթանալով պայմաններին՝ ցանկացողները կարող են դիմել վերը նշված բանկերին կամ վարկային կազմակերպություններին ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու համար:

Ծրագրի տեխնիկական աջակցության ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա. Պողոսյան

24.03.16

Ուշադրություն

Հարգելի բյուրեղավանցիներ՝ փետրվարի 13-ին, ժամը 13-ին Տյառնընդառաջի կապակցությամբ Բյուրեղավանի քաղաքապետարանն առաջին անգամ կազմակերպում է միջոցառում և նորապսակների օրհնության կարգ: Միջոցառման ընթացքում քաղաքապետ Հակոբ Բալասյանի կողմից նորապսակ զույգերին կհանձնվեն նվերներ: Նախապես գրանցված նորապսակներին և բյուրեղավանցիներին հրավիրում ենք մասնակցելու տոնախմբությանը, որը տեղի կունենա քաղաքապետարանի դիմահայաց հրապարակում: Միրով սպասում ենք և ակնկալում Ձեր ակտիվ մասնակցությունը:

09.02.16

Հարգելի բյուրեղավանցիներ

Աբովյանի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունն իրականացնում է սոցիալապես անապահով ընտանիքներին որպես սոցիալական աջակցություն հատկացված DVB-T2 ստանդարտի թվային հեռուստատեսային ընդունիչ սարքերի անվճար բաշխում: Ընդունիչ սարքեր կտրվեն այն ընտանիքներին, ովքեր 2015 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ 34.6 և ավելի անապահովության միավորով հաշվառված են անապահովության գնահատման համակարգում: Փետրվարի 3-ին ժամը 11-ին կարող եք ներկայանալ Բյուրեղավանի քաղաքապետարան՝ անձնագրով և սոցիալական քարտով: Ցուցակները փակցված են քաղաքապետարանի հայտարարությունների պատին:

01.02.16

Հարգելի բյուրեղավանցիներ

Տյառնընդառաջի կապակցությամբ Բյուրեղավանի քաղաքապետարանը կազմակերպում է միջոցառում, նորապսակների օրհնության կարգ: Խնդրում ենք 2015թ-ի փետրվարի 15-ից մինչև 2016-ի հունվարը ներառյալ ժամանակահատվածում ամուսնացած զույգերին ներկայանալ քաղաքապետարան միջոցառման համար անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելու նպատակով: Խնդրում ենք ներկայանալ քաղաքապետարան՝ մինչև ս/թ հունվարի 25-ը: Տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ 094 151-609 հ/հ-ին կամ գրել քաղաքապետարանի ֆեյսբուքյան էջին:

12.01.16

Սիրելի բյուրեղավանցիներ

2015թ-ի դեկտեմբերի 30-ին, ժամը 11-ին Բյուրեղավանի քաղաքապետարանի շենքի դիմաց տեղի է ունենալու ամանորին նվիրված մանկական ուրախ միջոցառում՝ շուր ծրագիր: Երեխաներին հյուր կզան Ձմեռ պապը, Ձյունանուշը, հայտնի մուլտիերոսներ: Բոլորիդ հրավիրում ենք մասնակցելու տոնական միջոցառմանը:

Սիրով սպասում ենք Ձեզ:

22.12.15

{jcomments off}

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՋԵՐԾ ՄՆԱՆՔ ՎԱՐԱԿՆԵՐԻՑ**

2017 թվականի մայիսին Աբովյան քաղաքում առաջին անգամ արձանագրվել է ընդերային լեյշմանիոզի 1 դեպք:

Լեյշմանիոզները պատկանում են Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից սահմանված «Վերացված (մոռացված) վարակիչ հիվանդություններ»-ին, որոնք վերջին ժամանակներս նորից արձանագրվում են: Լեյշմանիոզների փոխանցումը տեղի է ունենում մլակների միջոցով: Վարակի աղբյուրը տարբեր կենդանիներն են, հիմնականում՝ հիվանդ շնագզիները: 1999-2016 թվականներին արձանագրվել է ընդերային լեյշմանիոզի 116 դեպք, որոնցից 6-ը մահվան ելքով (4-ը՝ 2016 թվականին): Դեպքերը հիմնականում արձանագրվել են Սյունիքի, Տավուշի, Լոռու մարզերում և Երևանում: 2017 թվականի հունվարից մինչ օրս Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է ընդերային լեյշմանիոզի 6 դեպք:

Նկատի ունենալով վերը նշվածը, ինչպես նաև միջգերատեսչական համագործակցության անհրաժեշտությունը՝ առաջարկվում է սույն թվականի մայիսի 31-ին կազմակերպել 2 սեմինար-խորհրդակցություն՝ մարզի բուժաշխատողների շրջանում՝ լեյշմանիոզի համաճարակաբանական հսկողության, վաղ ախտորոշման, պայքարի և կանխարգելման միջոցառումների վերաբերյալ, ինչպես նաև կոմունալ ծառայությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, անասնաբուժական ծառայության ներկայացուցիչների շրջանում՝ լեյշմանիոզի բնական պահոց հանդիսացող շների և փոխանցող մլակների նկատմամբ միջոցառումների անհրաժեշտության վերաբերյալ՝ հիվանդության դեպքերի հետագա տարածումը կանխելու նպատակով: Սեմինարները կանցկացնի Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն ՊՈԱԿ-ի Փոխանցողով պայմանավորված և մակաբուժային հիվանդությունների համաճարակաբանության բաժնի պետ Լուսինե Պարոնյանը: Առաջարկվող սեմինարին մասնակցել ցանկացողները կարող են զանգահարել՝ 010 34 04 44h/h-ին